ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 40  Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ՝***

1.«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ մասերի հիման վրա Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ՝

- աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-8):

2.Մրցույթի օր նշանակել 2022 թվականի մարտի 25-ը:

3.Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Հայտարարության տեքստը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ղեկավարի 2022 թվականի
փետրվարի 10-ի N 40 Ա որոշման

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

**Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-8)**

Երկրորդ կարգի մասնագետը՝

ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և անմիջական ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

դ) Հորս բնակավայրում իրականացնում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը.

ե) առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին բնակավայրում տեղական հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ.

զ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ բնակավայրի բնակիչներին տրամադրում է օրենսդրությամբ սահմանված տեղեկանքներ.

է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է բնակավայրի զինապարտների գրանցամատյանի վարմանը, աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

թ) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում աշխատակազմի քարտուղարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկություն տրամադրելու համար.

ժ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին.

ի) իրականացնում է բնակավայրի սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառում, կազմում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բնակավայրի

լ) վերահսկում է բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործումը և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը.

խ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքներին.

ծ) իրականացնում է բնակավայրի բնակիչների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին.

կ) իրականացնում է իր առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այդ փաստաթղթերի պահպանության արխիվացման աշխատանքները.

հ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

ձ) աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին:

ղ) Երկրորդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

**Ներկայացվող պահանջները**

ա/ միջնակարգ կրթություն,

բ/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին>>, «Տեղական ինքնակառավարման մասին>>, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու կարգի մասին>>, «Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, «Գույքահարկի մասին>>, «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին>>, «Հողի հարկի մասին>>, «Տեղական տուրքերի և վճարների մասին>>, «Զինապարտության մասին>> օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

***Մրցույթը կկայանա 2022 թվականի մարտի 25-ին, ժամը 11:30-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապեփարանի շենքում: Հասցեն՝ գ. Շափին, փողոց 1 , շենք 1:***

**Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ): Դիմող քաղաքացիները Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմ կամ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

**ա) գրավոր դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),**

**բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների),**

գ) հայտարարություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով չի տառապում

դ) հայտարարություն այն մասին, որը դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչվել,

ե) արական սեռի անձիք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար 3 * 4 սմ չափսի

է) անձնագրի պատճենը:

*Քաղաքացիները մրցույթներին մասնակցելու համար փասփաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:*

*Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային փեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:*

*Փասփաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2022 թվականի մարտի 10-ը, ժամը 18.00-ն:*

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հեռախոս՝ 077-67-20-34

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

# ***Ո Ր Ո Շ Ու Մ***

11-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 41 Ա

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 22/12/2021թ. թիվ 101-Ն որոշումը

***որոշում եմ՝***

Ա/Ձ Սուսաննա Օհանյանին տալ Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական տարածքում ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն՝ տարվա կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 11

ք.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

14-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 42 Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 22/12/2021թ. թիվ 101-Ն որոշումը

***որոշում եմ՝***

Ա/Ձ Սպարտակ Մխիթարյանին տալ Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական տարածքում ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն՝ առաջին եռամսյակի կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. փետրվարի 14

Ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 43 Ա

ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՆՈՒՇ ՇԱՄԻԼԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը, ***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի նախկին բնակիչ հանգուցյալ Անուշ Շամիլի Խուդոյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Ջիվան Հմայակի Խուդոյանի /որդին/, Լալա Վաչիկի Սարգսյանի /հարսը/, Անուշ Ջիվանի Խուդոյանի /թոռը/, Մանե Ջիվանի Խուդոյանի /թոռը/, Վարդան Ջիվանի Խուդոյանի /թոռը/՝

1.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 962743, կադաստրային ծածկագիր՝ 10-035-020-018, տարածքը՝ 0,0482հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 7 փողոց, 11-րդ փակ., տուն 4 հասցեն,

2.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 1799914, կադաստրային ծածկագիր՝ 10-035-032-014, տարածքը՝ 0,167հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 2 փողոց, թիվ 48 հասցեն,

3.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 1826904, կադաստրային ծածկագիր՝ 10-035-032-017, տարածքը՝ 0,121հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 2 փողոց, թիվ 46 հասցեն,

4.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 975325, կադաստրային ծածկագիր՝ 10-035-003-008, տարածքը՝ 0,071հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 20 փողոց, թիվ 40 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

### *Ո Ր Ո Շ Ու Մ*

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 44 Ա

### ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԳԱՌՆԻԿ ԵՂԻԱՅԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՐՈՒՍՅԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրում սեփականատեր հանգուցյալ Գառնիկ Եղիայի Զաքարյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամ հանգուցյալ Արուսյակ Մամիկոնի Հակոբյանի /կինը/՝

1.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 03022022-10-0004, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0005-0043, տարածքը՝ 0,0241հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Վարդահովիտ բնակավայր, 8 փողոց, թիվ 10 հասցեն,

2.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 02022022-10-0027, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0005-0042, տարածքը՝ 0,0281հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Վարդահովիտ բնակավայր, 8 փողոց, թիվ 12 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 15

ի.Եղեգիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 45 Ա

## ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ՌԱՖԱՅԵԼԻ ԲԱԲԱԳՅՈՒԼՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը, ***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Սամվել Ռաֆայելի Բաբագյուլյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Շուշիկ Սուրենի Ղազարյանի /կինը/, Ռոմիկ Սամվելի Բաբագյուլյանի /որդին/, Ռոլան Սամվելի Բաբագյուլյանի /որդին/, Վարուժան Սամվելի Բաբագյուլյանի /որդին/՝

1.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 2151734, կադաստրային ծածկագիր՝ 10-035-039-047, տարածքը՝ 0,1913հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 3 փողոց, տուն 13 հասցեն,

2.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 1478337, կադաստրային ծածկագիր՝ 10-035-034-027, տարածքը՝ 0,085հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 2 փողոց, 4-րդ փակ., թիվ 9 հասցեն,

3.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 975378, կադաստրային ծածկագիր՝ 10-035-048-015, տարածքը՝ 0,0294հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 4 փողոց, 1-ին փակ., թիվ 3 հասցեն,

4.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 975379, կադաստրային ծածկագիր՝ 10-035-048-005, տարածքը՝ 0,0502հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 4 փողոց, 1-ին փակ., թիվ 4 հասցեն,

5.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 975380, կադաստրային ծածկագիր՝ 10-035-045-004, տարածքը՝ 0,024հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 3 փողոց, թիվ 12/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 46 Ա

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, Վայոց ձորի մարզպետի 14/02/2022 թվականի N01/07.2/0795-2022 գրությունը և ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական տարածքի 15 փողոց, թիվ 3 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /վկայական՝ N 30062017-10-0002, կադաստրային ծածկագիր՝ 10-035-0036-0030, մակերեսը՝ 0,1447հա/ գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 15

հ.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

### *Ո Ր Ո Շ Ու Մ*

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 47 Ա

### ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 02-ը փետրվարի 2002 թվականի N88 որոշման դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական տարածքի 15 փողոց, թիվ 3 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0,1447հա հողամասի վրա առկա 412,46ք/մ մակերեսով շինության նպատակային նշանակությունը փոփոխել բազմաբնակարան բնակելի շենքի, գործառնական նշանակությանը՝ բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ - ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 15

ի.Եղեգիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

16-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 48 Ա

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ /ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1317-Ն որոշումների դրույթները, ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբեր 06-ի ակտը

**որոշում եմ՝**

1.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում կառուցված փողոցային լուսավորության շահագործման համար Եղեգիսի համայնքապետարանին տալ ավարտական ակտ /շահագործման թույլտվություն/:

2.Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրում կառուցված փողոցային լուսավորության շահագործման համար Եղեգիսի համայնքապետարանին տալ ավարտական ակտ /շահագործման թույլտվություն/:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. փետրվարի 16

ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

17-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 49 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլուխը, և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին՝ չի խանգարում ինժեներական կառույցներին, ***որոշում եմ՝***

1.Եղեգիս համայնք, բնակավայր Շատին, 21 փողոց, թիվ 29 հասցեում գտնվող Սլավիկ Խաչիկի Հարությունյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Սիրանուշ Հայրիկի Գրիգորյանի /կինը/, Վահիկ Սլավիկի Հարությունյանի /որդին/, Գարիկ Սլավիկի Հարությունյանի /որդին/, Անի Սլավիկի Հարությունյանի /դուստրը/ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում գտնվող ինքնակամ կառուցված 163,9 ք/մ մակերեսով կառույցը (բնակելի տունը) համարել օրինական:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Սլավիկ Խաչիկի Հարությունյանին շինության օրինականացման համար 900 355 120 065 հաշվեհամարին վճարելընդամենը 103 421 /մեկ հարյուր երեք հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ /1քմ՝ 631 դրամ/՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04/06/2020թ.-ի թիվ 1023-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գործակիցները:

3.Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

5.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Սլավիկ Խաչիկի Հարությունյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Սիրանուշ Հայրիկի Գրիգորյանի /կինը/, Վահիկ Սլավիկի Հարությունյանի /որդին/, Գարիկ Սլավիկի Հարությունյանի /որդին/, Անի Սլավիկի Հարությունյանի /դուստրը/ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0009

մակերեսը՝ 0,26475հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 21 փողոց, տուն 29 հասցեն:

4․Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5․Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. փետրվարի 17

ք.Եղեգիս